

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՈՒՍՄՈՒՆՔԸ
ԻՇԵԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ս. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

Գրիգոր Տաթևացու կրոնախմաստասիրական աշխատություններում նշանակալի տեղ են գրավում հասարակության, պետության, իշխանության, օրենքների և կառավարման մասին խորհրդածությունները: Այդ հարցերի քննարկման ընթացքում առավել ցայտուն են դրսևորվել միջնադարյան հայ մրտածողի մարդասիրական և հայրենասիրական գաղափարները:

Բնութագրելով մարդու հիմնական հատկությունները՝ Տաթևացին «Գիրք հարցմանց» երկում շեշտում է այն միտքը, որ, ի տարբերություն կենդանիների, մարդը հասարակական, քաղաքական և բարոյական արարած է: Մարդու ֆիզիկական-անատոմիական կառուցվածքը, մարմնական և մտավոր հատկությունները ցուցանում են, որ նա ի վերուստ նախատեսված է հասարակական համատեղ կյանքի համար: Աստված մարդուն չի ստեղծել որպես ինքնարավ էակ. մարդու բնությունն այնպիսին է, որ նա չի կարող առանց ուրիշ մարդկանց գոյատևել: Աստված մարդուն «միտումնավոր» ստեղծել է կարիքավոր, որ նա ուրիշ մարդկանց հետ հաղորդակցվելու, համատեղ ապրելու պահանջմունք ունենա: Տաթևացին ձևակերպում է մարդասիրական այն միտքը, որ անգնահատելի և անփոխարինելի է մարդու դերը մարդու կյանքում: Ճիշտ է, Աստված մարդու համար ստեղծել է անբան «գաշնակիցների և ընկերների» մի սովոր բանակ, որոնց գոյության իմաստը մարդկանց ծառայելն է, նակայն, ինչպես նկատում է Տաթևացին, «մարդն է մարդոյ օգնական. զի թէպէտ կային այլ կենդանիք օգնական մարդոյ ի բռն. ի լուծ. և այլ պէտս, այլ... մարդն է օգնական մարդոյ»¹:

«Առ միմեանս կարօտութեան» գլխավոր պատճառներից մեկը, որ անհրաժեշտություն է դարձնում մարդկանց միավորումը, գոյության միջոցների հայթայթումը և մարդկանց կենսական պահանջմունքների բավարարումն է: Մարդիկ ձգտում են համատեղ կյանքի, քանզի «իւրաքանչիւրք»՝ առ մարմնաւոր պէտս հարկաւորացն շեմք բաւական»: Այսպիսով, կարիքը մարդկանց հարկադրում է միավորվել, միասին պայքարել կյանքի դժվարությունների դեմ և, դրանով իսկ, հիմք ստեղծում՝ բացառելու կամ նվազեցնելու մարդկանց միջև փոխադարձ ատելություն, անվստահության և հակակրանքի առաջացումը: Աստված մարդկանց ստեղծելով կարիքավոր բնությամբ՝ նպատակ ուներ մարդկանց միմյանց պիտանի դարձնել, նրանց միջև հաստատել մտերմության, եղբայրության և վստահության հարաբերություններ: Եթե այդքանից հետո էլ մարդիկ իրար ատում են, «իրար հետ լեզու» չեն գտնում, գրում է Տաթևացին, ապա ինչ կլինեն, եթե մարդիկ միմյանց կարիքը և պահանջը չունենային: Աստված «արար զմեզ կարօտս՝ զի մեք ի միմեանց օգնութիւնէ

¹ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, Գ. Պոլիս, 1741, էջ 192:

գտցուք զկարօտութիւն մեր. և սիրեսցուք զմիմեանս. և լինի եղբայրութիւն. զի այժմ կարօտ եմք միմեանց հոգւով և մարմնով. զի մի միոյն ուսանիմք. և այլոց ուսուցանեմք, գնեմք և վաճառեմք, շինելով և տնկելով. այլովն՝ դեռ ևս ատեմք զմիմեանց. քանի՞ առաւել ատէաք թէ անկարօտ էաք զմիմեանց»²:

Սոցիալական կյանքի առաջացման այդպիսի բացատրութիւնը կարծես թե համընկնում է այսպես կոչված «հակակրանքի տեսութեան»³ հետ, ըստ որի ի սկզբանե մարդկանց միջև գոյութիւն չի ունեցել ոչ փոխադարձ սեր, ոչ մտերմիկ հարաբերութիւն, այլ, ընդհակառակը, տիրող է եղել ատելութիւնը և հակակրանքը: «Մարդը մարդուն գայլ է» պայմաններում մարդիկ միավորվել են անհրաժեշտաբար՝ կարիքից դրդված: Փաստորեն, «հակակրանքի տեսութիւնը» ենթադրում է, որ մարդիկ ի սկզբանե ծնվել են իբրև թըշնամի, միմյանց ատող էակներ: Այդպիսի կանխադրույթը սկզբունքորեն անընդունելի է Տաթևացու համար, քանզի դա հակասում է մարդու բնութեան մասին քրիստոնեական հումանիտական ըմբռնմանը: Տաթևացու կարծիքով մարդը մարդուն թշնամի չի ստեղծվել, որովհետև նախ բոլոր մարդիկ ունեն միևնույն բնութիւնը, իսկ «բնութիւն ինքեան թշնամի ոչ է»: Աստված մարդուն արարել է բարի բնութեամբ և ոչ թե չար. «հոգի, մարմին և միտք մարդոյս բարի են. և ի բարւոյն Աստուծոյ ըստեղծեալ»: Երկրորդ՝ բոլոր մարդիկ միապես ունեն Աստծո պատկերն ու նմանութիւնը: Երրորդ՝ բոլոր մարդիկ ունեն միևնույն նախահայրը. և, այս իմաստով, նրանք ազգակիցներ են, ընդամին, երկու առումով՝ մարմնական և հոգևոր: Մարդիկ մարմնապես մի ազգ են, որովհետև ստեղծվել են նույն հողից, իսկ հոգևոր առումով ևս մի ազգ են, քանզի «ամենքն յԱստուծոյ ստեղծաք առանց միջնորդի»:

Սոցիալական կյանքի նման մեկնաբանութիւնը հիմք է տալիս պնդելու, որ Տաթևացու տեսակետը ավելի շուտ համընկնում է այսպես կոչված «համակրանքի տեսութեան» հետ, ըստ որի կարիքից դրդված միավորվելով՝ մարդիկ նպատակ ունեն միմյանց միջև հաստատել եղբայրութեան, սիրո և համակրանքի հարաբերութիւններ, միասին մտածելու իրենց համատեղ կյանքի կազմակերպման մասին:

Տաթևացու սոցիալ-մարդաբանական հայացքների հիմքում ընկած է մարդկանց բնական հավասարութեան մասին հումանիտական-քրիստոնեական գաղափարը: Ինչպես բոլոր արարածները «հավասար» են, որովհետև միևնույն Աստծո ստեղծագործութեան արդյունքներն են, այնպես էլ բոլոր մարդիկ հավասար են, քանի որ նրանք նույն նախահոր ժառանգներն են և ստեղծվել են միևնույն նյութից: «Ամենայնքն ի միոյ հողոյ եմք,— գրում է Տաթևացին,— թէպէտ կէսք յետոյ, և կէսք յառաջոյ եկին: Եւ ոչ ստեղծեաց Աստուած երկու Ադամ. մին յսկոյ վասն իշխանաց. և մին ի կաւոյ վասն աղքատաց. այլ մին Ադամ, և այն ի հողոյ: Եւ ամենայնքն մեծամեծ և փոքունք՝ ի նմանէ յառաջ եկին»⁴: Թեև մարդիկ ի ծնե հավասար են, սակայն սոցիալական կյանքը խարսխված է անհավասարութեան վրա: Մարդիկ իրար հավասար չեն ոչ ունեցվածքով ու հարստութեամբ, ոչ էլ ընդունակութեամբ ու հմտութեամբ: Տաթևացին սոցիալական անհավասարութեան փաստը բացատրում է աստվածային նախախնամութեան գոյութեամբ: Աստծո կամոք են ըստեղծվել հարուստներ և աղքատներ, իշխաններ և ծառաներ, որոնք կոչված են իրար հետ համագործակցելու, փոխօգնելու, մեկը մյուսի կարիքը հոգա-

² Նույն տեղում, էջ 254:

³ Այդ մասին տե՛ս А. А. Игнатенко. В поисках счастья. (Общественно-политические воззрения арабо-исламских философов средневековья). М., 1989, էջ 67—68:

⁴ Գրիգոր Տաթևացի, նշվ. աշխ., էջ 91:

լու: Այլ խոսքով, նախաինամությամբ տրված անհավասարությունը չի հակասում սոցիալական ներդաշնակության գաղափարին, քանի որ անհավասարությունը ոչ թե խոչընդոտում, այլ, ընդհակառակը, դրդում է հակադիր կողմերին փնտրել համագործակցության շահավետ ուղիներ: Նրանք կախված են իրարից և մեկ կողմի կյանքը անպատկերացնելի է առանց մյուսի գոյության:

Տաթևացին պաշտպանում է հասարակության կառուցվածքի և գործառույթյան վերաբերյալ օրգանիստական տեսությունը, ըստ որի հասարակությունը մի կենդանի օրգանիզմ է, և ինչպես մարդկային օրգանիզմի ամեն մի անդամ կատարում է իրեն վերապահված անփոխարինելի դերը, այնպես էլ հասարակության մեջ յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր խավ կատարում է որոշակի գործառույթ: Բոլոր մարդիկ թեև ունեն միանման բնություն, սակայն սոցիալական աշխարհում, ինչպես և համայն տիեզերքում, գոյություն ունի աստիճանակարգություն: Աստծո կամքով՝ աստիճանակարգված սոցիալական ներդաշնակությունը պահպանելու նպատակով հասարակության մեջ մարդիկ զբաղեցնում են տարբեր սոցիալական դիրք և կատարում են դրանց համապատասխան գործառույթներ: Բոլոր խավերի գործունեության նպատակը պետք է լինի «ընդհանուր բարիքը»: Այս հարցում Տաթևացու սոցիալաբանական հայացքների վրա նկատելի է Պլատոնից սերող այն մտքի ազդեցությունը, թե հասարակության մեջ սոցիալական խավերի առկայությունը, ինչպես նաև դրանց միջև աշխատանքի բաժանումը սոցիալական ներդաշնակության ապահովման նախադրյալն է: Այդպիսի հասարակությունը խարբսված է արդարության սկզբունքի վրա: Տաթևացին նույնպես սոցիալական շերտավորման մեջ տեսնում է արդարության սկզբունքի իրականացումը: Պլատոնի նման նա հոգու երեք մասերին համապատասխան տարբերակում է հասարակական երեք խավ՝ հոգևորականներ, իշխաններ և շինականներ, (մի այլ դասակարգման համաձայն՝ կառավարողներ (հոգևորականներ և իշխաններ), զինվորականներ, արհեստավորներ ու շինականներ), որոնցից յուրաքանչյուրն ունի իր հասարակական աշխատանքը և պարտականությունը:

Ընդունելով այն միտքը, որ սոցիալական աստիճանակարգությունը, իբրև տիեզերական աստիճանակարգության դրսևորում, աստվածային ծագում ունի, հետևաբար՝ անփոփոխ է, Տաթևացին միևնույն ժամանակ մարդկանց այս կամ այն խավին պատկանելը չի դիտում իբրև բնածին և «հավերժական»: Նախ, ի տարբերություն Արիստոտելի, որը ստրուկ կամ իշխան լինելը պայմանավորում էր մարդու բնությամբ, Տաթևացին միջնադարյան շատ փիլիսոփաների նման դա համարում է «պայմանական և ոչ թե բնական»⁵: Երկրորդ՝ միջնադարյան մտածողի համար սոցիալական աստիճանակարգության անփոփոխության գաղափարը բնազանցական նշանակություն ուներ՝ անփոփոխությունը առհասարակ չի բացառում որոշ փոփոխականություն: Այսինքն՝ մարդու սոցիալական կարգավիճակի փոփոխականությունը չի բացառվում, որովհետև մարդիկ անձնիշխան են, իսկ կյանքը հարափոփոխ է և լի պատահականություններով: Այդպիսի փոփոխությունը, որը միջնադարյան մտածողի համար զարմանալի երևույթ է, Տաթևացին կրկին կապում է աստվածային նախաինամության հետ: Չարմանալի է, գրում է Տաթևացին, որ «երէկ ի կարգ սպասաւորացն ջրկիր և փայտակիր էր. և այսօր նստեալ յաթոռ թագաւորական. և թագաւորական թագի պսակեալ, որպէս Մուրիկ թագաւորն և այլ բազումք: Եւ այս ըստ անքննին կամացն Աստուծոյ...»⁶: Վերջապես, միջնա-

⁵ Տե՛ս M. Wulf, *Philosophy and Civilization in the Middle ages*. New-York, 1969, էջ 277-278:

⁶ Գրքո՞ր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կօշի Զմեբրան հատոր, Կ, Պոլիս, 1740, էջ 274:

դարյան քրիստոնյա մտածողի համար այս կամ այն սոցիալական խավին պատկանելը ինքնին առավելություն չէ, ոչ էլ թերություն: Մարդիկ իրարից տարբերվում են ոչ այնքան սոցիալական կարգավիճակով, որքան բարոյական գիտակցությամբ և բարոյական վարքագծով:

Սոցիալական աստիճանակարգությունը ենթադրում է հասարակական կյանքի կարգավորվածություն, մարդկանց միջև որոշակի հարաբերությունների, համատեղ կեցության ձևերի գոյություն: Տաթևացին ելնում է այն մտքից, որ հասարակությունը չի կարող գոյատևել առանց իշխանության, օրենքների և կառավարման: Իշխանությունը (պետությունը, թագավորությունը) առաջանում է անհրաժեշտաբար՝ մարդկանց երկրային կյանքը կարգավորելու և կազմակերպելու համար: Ծթե Վահրամ Բաբունին Օգոստինոս Երանելու պես պետության ծագումը կապում էր նախնական մեղսագործության հետ, ապա Տաթևացին Արիստոտելի նման պետության առաջացումը բացատրում է մարդու՝ հասարակական-քաղաքական էակ լինելու հանգամանքով: Աստված մարդուն ստեղծել է իբրև սոցիալական էակ, ուստի սոցիալական միավորումների ըստեղծումը համապատասխանում է մարդու բնության պահանջներին: Տաթևացին ընդգծում է այն միտքը, որ անիշխան, անղեկ և անառաջնորդ հասարակությունը (երկիրը) դատապարտված է կործանման, իսկ, ընդհակառակը, իշխանություն ունեցող, կառավարվող, օրենքներով կարգավորվող երկիրը անհրաժեշտաբար բարգավաճում է և հզորանում. «երկիր և քաղաք ամրացնալք են իշխանան և հոգւոր առաջնորդան. ի նոցանէ առնուն զհոգևոր և զմարմնաւոր կենդանութիւն: Եվ են բարձրացեալ փառօք և զուարճացեալ ուրախութեամբ և այլոց բազմաց շուք և հովանի և պահապան լինին: Իսկ յորժամ երկիր առանց իշխանի լինի և ժողովուրդն առանց առաջնորդի, բաժանեալ են ի կենդանութեանց, անկեալ ի բարձրութեանց, և կոխան եղեալ ամենայն մարդկան. և ցրուեալք յամենայն հողմոց, տգեղացեալ և շորացեալ և ապականեալ զանազան մեղօք»⁷: Անիշխան երկրի ժողովուրդը ոչ միայն զրկվում է համահավաք, խաղաղ ու բարեկեցիկ կյանքից, այլև վտանգվում է նրա հետագա գոյությունը, խաթարվում նրա ազգային և մարդկային դիմագիծը: Իբրև այդ եզրակացությունը հաստատող օրինակ, Տաթևացին մատնացույց է անում հայ ժողովրդի անմխիթար վիճակը. «որպէս ի ժամանակս յայս տեսանեմք յազգս մեր անիշխան և անառաջնորդ իբրև ոշխար առանց հովուի՝ գազանալուր լինին և կորնչին...»⁸:

Քանի որ մարդը հոգու և մարմնի միասնություն է, այսինքն՝ հոգով կապված է երկնային աշխարհի հետ, իսկ մարմնով՝ երկրային աշխարհի հետ, այդ պատճառով Տաթևացին տարբերակում է իշխանության երկու ձև՝ հոգեվոր և մարմնական: Մարդը երկու «պետության» քաղաքացի է. նա միաժամանակ ենթարկվում է հոգևոր իշխանությանը և աշխարհիկ-մարմնական իշխանությանը: Հոգևոր իշխանությունը իրականացնում են եկեղեցու առաջնորդները, որոնք կառավարում են «զհոգևոր տունս Աստուծոյ և զհոգիս մարդկան», իսկ թագավորները և իշխանները կարգավորում են «զմարմնաւոր տունըս աշխարհի. զգեղ՝ զքաղաք՝ զերկիր՝ և զաշխարհ»⁹: Այդ երկու իշխանությունների միջև, ըստ Տաթևացու, գոյություն ունեն հետևյալ տարբերությունները. առաջին՝ աշխարհիկ իշխանությանը մարդիկ ենթարկվում են բռնությամբ, հարկադրանքով և անհրաժեշտաբար, իսկ հոգևոր իշխանությանը հրենազանդվում են հոժարակամ և ազատ ընտրությամբ: Երկրորդ՝ աշխարհիկ իշխանությունը անցողիկ է և փոփոխական, սահմանափակված տարածության

⁷ Գրքագր Տաթևացի, Գիրք բարոյութեան որ կոչի Ամարան հատոր, էջ 423:

⁸ Նույն տեղում:

և ժամանակի մեջ, իսկ հոգևոր իշխանությունը մշտական է և ենթակա չէ տեղաժամանակային որևէ սահմանափակության. օրինակ՝ «զի տեղիք՝ զիշխանութիւն նորա և զսուր ոչ արգիլեն, ոչ ամրոց՝ ոչ պարիսպ կամ զօրք. կամ այլ ինչ»⁹: Երրորդ՝ աշխարհիկ իշխանությունը վերաբերում է միայն մարդու մարմնին և մարդու մահվանից հետո այլևս ոչ մի ներգործություն չի ունենում, մինչդեռ հոգևոր իշխանությունը վերաբերում է թե մարմնին և թե հոգուն ու ներգործում է մարդու վրա նաև հանդերձալ աշխարհում: Այսպիսով, նշված առումներով Տաթևացիին փաստում է հոգևոր իշխանության առավելությունը աշխարհիկ իշխանության նկատմամբ: Հարցի այդպիսի լուծումը տրամաբանական է, քանի որ ըստ քրիստոնեական վարդապետության մարդու հոգին պատվական է մարմնից, բացի դրանից՝ երկրային կյանքը մարդու համար ժամանակավոր է, ուստի միջնադարյան քրիստոնյա մտածողները հոգևոր իշխանությունը գերադասում էին աշխարհիկ իշխանությունից: Համենայն դեպս, եվրոպական իրականության մեջ, որտեղ կաթոլիկ եկեղեցու գերիշխանությունը կյանքի բոլոր ասպարեզներում բացահայտ բնույթ էր կրում, կրոնափրիտոփայական մտքի մեջ արմատավորված էր աշխարհիկ իշխանության նկատմամբ հոգևոր իշխանության գերազանցության մասին գաղափարը: Եթե միջնադարյան Եվրոպայում ժամանակի ընթացքում հիմնադրվեց Սրբազան աստվածապետություն՝ Հռոմի կաթոլիկ եկեղեցու գլխավորությամբ, ապա պատմական հանգամանքների բերումով հայոց մեջ այլ կերպ դասավորվեց հոգևոր և աշխարհիկ իշխանությունների հարաբերությունը: Պետականության երկարատև բացակայության պայմաններում հայ ժողովուրդը հայտնվում էր կրոնամշակութային արժեքներով իրարից տարբեր այլազգիների տիրապետության տակ: Այդ պարագայում հոգևոր իշխանության առավելության մասին քրիստոնեական գաղափարը վերածվում էր ազգային գաղափարի, որի միջոցով հայ եկեղեցու տեսաբանները հիմնավորում էին հայ ազգի հոգևոր միասնության՝ անհրաժեշտությունը: Օրինակ, Վահրամ Բարունին, որը ապրում էր Կիլիկիայի հայկական թագավորությունում, զբաղեցնում արքունի ատենադպրի բարձր պաշտոնը, հոգևոր իշխանությունը միանշանակորեն ենթարկում է աշխարհիկ իշխանությանը: Նա նույնիսկ չի առաջադրում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների հարաբերության հարցը իբրև ինքնուրույն իշխանությունների փոխհարաբերության հարց, այլ, հոգևորականությունը դիտելով որպես առանձին հասարակական դաս՝ հոգևորականների խնդիրն է համարում ծառայել աշխարհիկ իշխանությանը և հոգևոր «զենքով» նպաստել պետության հզորացմանը: Ընդհակառակը, հայ մտածողներից ներանք, ովքեր ապրում էին պետականության բացակայության պայմաններում և հարկադրաբար ենթարկվում էին օտար նվաճողների «մարմնական» իշխանությանը, հակված էին առավելությունը տալու հոգևոր իշխանությանը: Այս միտումը դեռևս նկատելի էր 5-րդ դարի հայ մտածողների, ի մասնավորի Ծղիշեի փրիտոփայության մեջ, որը, ինչպես նկատում է Գ. Խրլոպյանը, «ընդգծում է եկեղեցին պետությունից բաժանելու, նրանց ֆունկցիաների մեջ խիստ տարբերակում մտցնելու պահանջը: Պարսիկներին վերապահում է միայն աշխարհիկ որոշ ֆունկցիաների տնօրինությունը, իսկ հայկական եկեղեցուն՝ ժողովրդի հոգու, մտքի, հավատի, խղճի և բարոյա-իրավական հարաբերությունների ղեկավարումը»¹⁰: Այս դիրքորոշումը, որ ժամանակի ընթացքում վերածվեց ավանդույթի և հայոց եկեղեցուն դարձրեց «հոգու որսորդության» դեմ

⁹ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Զմեբան հատոր, էջ 181:

¹⁰ Գ. Խրլոպյան, Հայ սոցիալական իմաստասիրության պատմություն (Հելլենիստական և վաղ ֆեոդալական շրջան), Երևան, 1978, էջ 175:

մղվող պայքարի կենտրոն, մի կողմից նպաստեց հայոց եկեղեցու, իրրև «հայոց իշխանութիւն», հեղինակութիւն բարձրացմանը, իսկ մյուս կողմից որոշ իմաստով խանգարեց օտար զավթիչների դեմ ազգային-ազատագրական պայքարի կազմակերպմանը: Զորօրինակ, Տաթևացու ապրած ժամանակում հայոց եկեղեցին, մխրճվելով կաթոլիկ եկեղեցու կողմից պարտադրված կրօնադավանաբանական պայքարի հորձանուտի մեջ, ուժ չունեցավ լուրջ քայլեր ձեռնարկել հայոց աշխարհիկ իշխանութիւնը վերականգնելու ուղղութիւնով:

Տաթևացու սոցիալ-քաղաքագիտական տեսութիւնի մեջ առանձնանում են իշխանութիւն, կառավարման մասին խորհրդածութիւնները: Գրանցում նկատելի է Հովհաննես Պլուզ Երզնկացու քաղաքագիտական հայացքների ազդեցութիւնը: Տաթևացին ոչ միայն վերաբարտադրում է Երզնկացու հայացքները, այլև դրանք հարստացնում է նոր գաղափարներով, լրացուցիչ հիմնավորումներով և իր ժամանակի ոգուն համահունչ հարցադրումներով:

Տաթևացին իշխանութիւն և կառավարման լավագույն ձև է համարում միապետութիւնը, կարծելով, որ միապետական իշխանութիւնը կամ կառավարումը լավագույնս համապատասխանում է մարդու բնութիւնը: Ինչպես մարդու բարդ օրդանիզմը կառավարում է զուխը, այնպես էլ երկիրը պետք է կառավարվի թագավորի կողմից: Պետութիւն կառուցվածքի օրգանիստական տեսութիւնից ելնելով՝ Տաթևացին բացարձակացնում է անհատի (թագավորի, իշխանի) դերը հասարակութիւն կառավարման գործում: Այսպես, Տաթևացին իշխանին վերապահում է անսահմանափակ լիազորութիւններ և իրավունքներ, նրան համարում հասարակական կյանքի կենսունակութիւն ակունքը և «շարժիչ ուժը»: Այդ կապակցութիւնում նա գրում է հետևյալը. «որպէս զուխն մի է բոլոր մարմնոյն և բարձրացեալ ի վերայ ամենայն անդամոցն և ի նմանէ իջանեն ամենայն կենդանութիւնք և զգայութիւնք և շարժումըն ի բոլոր ամենայն օդուածս մարմնոյն. նոյնպէս և իշխանն մի է ի մէջ մարդկան. և բարձրացեալ փառօք և մեծութեամբ. և զուխ նստեալ ամենայն մարդկան. և նմանէ գոյ ի մարդ հրաման և շարժումն. մահ և կեանք. շէն և աւեր. և ամենայն նորա հրամանան կարգաւորի ընդ երկիր»¹¹: Ինչպես մի սիրտ գոյութիւն ունի մարդու օրգանիզմի բոլոր անդամների համար, որից բոլորը ստանում են շունչ և ջերմութիւն, այդպես էլ իշխանը, գրում է Տաթևացին, «սիրտ է ամենայն երկրին և հիմն. և ի նմանէ ամենայն մարդիկ առնուն զսեր. զգութ. զպէտս. զկերակուր և զայլն»: Այսպիսով, կառավարող իշխանը բացարձակ իշխանութիւն ունի իր հպատակների վրա. նա ոչ միայն վճռում է պատերազմի և խաղաղութիւն, երկրի շենութիւն և կարգավորվածութիւն, այլև մարդկանց ապրել-շապրելու, հարստանալու-աղքատանալու և սոցիալ-բարոյական, կենսական այլևայլ հարցեր: Փաստորեն, հպատակի կյանքը ամբողջութիւն գտնվում է կառավարող իշխանի ձեռքում:

Քանի որ կառավարող իշխանի անհատական հատկութիւններից և կառավարման հմտութիւնից է կախված երկրի ու մարդկանց ինչպիսին լինելը, ուստի Տաթևացին հատուկ ուշադրութիւն է դարձնում այն հարցին, թե ով պետք է կառավարի երկիրը ու մարդկանց: Այդպիսի հարցադրումն արդեն իսկ ցույց է տալիս, որ Տաթևացին կողմնակից է հասարակութիւն էլիտար կառավարմանը: Այսինքն՝ կառավարողը պետք է օժտված լինի իմացական, գործնական, բարոյական այնպիսի հատկութիւններով, որոնք երաշխիք կլինեն նրա արգասավոր գործունեութիւն համար: Երկրային իշխանութիւնը, որը աստվածային ծագում ունի և գտնվում է նախախնամութիւն տակ, չի տրվում պատահական, ամեն մի մարդու: Աստված, գրում է Տաթևացին, «ի

¹¹ Գրիգոր Տաթևացի, Գիրք բարոգութեան որ կոչի Ամարան հատոր, էջ 422:

մէջ մարդկան զհանճարեղն ընտրէ» և «դնէ իշխան և տէր ի վերայ ամենայն մարդկան»: Օրինակ, եթե մարդը չի կարողանում կառավարել իր տունը, ընտանիքը, ապա նա երբեք չի կարողանա ղեկավարել երկիրը: Եվ, ընդհակառակը, եթե մարդը «գիր բարսն կարէ ուղղել, և զտունն կարէ շինել. և որ զբարսն և զտունն կարգաւորէ. այնպիսին կարէ զքաղաք և զերկիր կարգաւորել և առաջնորդել...»¹²:

Տաթևացիները Երզնկացու պես կարծում է, որ կառավարումը գիտութիւն է և արվեստ: Դա գիտութիւն է, որովհետև ենթադրում է հասարակական կյանքի և մարդկային բնութիւնի յուրահատկութիւններին խոր և բազմակողմանի իմացութիւն: Հասարակութիւնը բազմաթիւ անհատների, կամքերի, տարբեր և հակադիր շահեր ու պահանջմունքներ ունեցող մարդկանց բազմութիւն է: Կառավարողը պետք է գիտելիք ունենա դրանցից յուրաքանչյուրի մասին: Ինչպես կենդանիներ պահող մարդը, գրում է Տաթևացին, պետք է լավ իմանա ամեն մի կենդանու «բնութիւնը» և յուրաքանչյուրին տա համապատասխան կերակուր (խոտակերին՝ խոտ, մսակերին՝ միս և այլն), այդպես էլ «մեծ ջան և իմաստութիւն պարտի ունիլ իշխանին՝ որ զերկիրն ի շինութեան պահէ և զամենայն մարդ ի յիր տեղին կառաւարէ. և յԱստուծոյ բաց երես լինի»¹³: Կառավարող իշխանը պետք է լինի մարդկային բնութիւնի գիտակ և երբեք չանտեսի այն հանգամանքը, որ, շնայած աստվածային կամոք ոմանք իշխան են, իսկ մյուսները՝ հպատակ, այնուհանդերձ, բոլոր մարդիկ իրար հավասար են: Մարդկային բնութիւնի առումով իշխանը ոչ մի առավելութիւն չունի իր հպատակների նկատմամբ: Նրա իշխանութիւնը տակ գտնվող մարդիկ, Երզնկացու դիպուկ արտահայտութեամբ, ոչ թե անբան հոտի անդամներ են, այլ «մարդիկ են ստեղծեալ յԱստուծոյ ի միոջէ զանգուածոյ, իբրև զինքն, և շունին ինչ որ պակասութիւն, բայց միայն իշխանութիւն»¹⁴: Այս հումանիստական դիրքորոշումը պաշտպանում է նաև Տաթևացին՝ դա տարածելով նաև հոգևոր առաջնորդների վրա: Հոգևոր առաջնորդը չպետք է մոռանա, որ ինքը նույնպես մարդու որդի է և ոչ թե հրեշտակ կամ «գերագոյն արարած»: «Եվ ոչ ինչ ունիս ավելի ի բնութիւնդ քան զնոսա, ոչ ես որպէս զհոգիւն ոչխարաց. զի հոգիւն բանական մարդ է. և ոչխարն անբան կենդանիք: Այլ դու որ հոգիւդ ես մարդկան՝ մարդ ես նոցա հաւաքար հոգւով և մարմնով, մտօք և այլովք»¹⁵: Դրա հետ մեկտեղ իշխանը պետք է շնորհալի, որ իր իշխանական կարգավիճակը ժամանակավոր բնույթ ունի. նախ, որ ինքը նույնպես մահկանացու էակ է, երկրորդ, Աստուծոց է կախված նրա իշխան լինելու կամ չլինելու վիճակը: Երրորդ՝ իշխանութիւն ունենալը պարտականութիւն է. իշխանը կոչված է ծառայելու մարդկանց և Աստուծուն, իրականացնելու երկնային Քաղաքի պատգամները: Իշխանները կարգվում են Աստուծո կողմից ոչ թե իրենց սեփական բարեկեցութեան ապահովման համար, այլ ծառայելու «ընդհանուր բարիքին»: Այսինքն՝ իշխանութիւնը ստեղծված է ոչ թե իշխանի համար, այլ բոլորի համար, բայց իշխանը ստեղծված է իշխանութեան համար: Միջնադարում տարածված այս կարևոր քաղաքագիտական սկզբունքով աստվածաբան-փիլիսոփաները ձգտում էին առավելագույնս «մարդկայնացնել» կառավարման գործընթացը, կարգավորել իշխողների և իշխվողների հարաբերութիւնները, կառավարողներին հեռու պահել մեծամտական և բռնապետական հավակնութիւններից:

¹² Նույն տեղում, էջ 95:

¹³ Նույն տեղում, էջ 25:

¹⁴ Հովհաննէս Պլուզ Երզնկացի, Քուլթ առ իշխանս Եկեղեցաց գաւառի, «Է. Բաղդասարյան», Հովհաննէս Երզնկացի և նրա խրատական արձակը, Բնագրեր» գրքում, Երևան, 1977, էջ 217:

¹⁵ Գրիգոր Տաթևացի, Գիրք բարեգութեան որ կոչի Զմերան հատոր, էջ 182:

Չնայած Տաթևացին կառավարման գործում չափազանց մեծ դեր է վերապահում իշխաններին, այնուհանդերձ, նա կողմնակից չէ միահեծան դեկավարման տարբերակին: Որպեսզի իշխանը շղառնա բռնապետ կամ շարաշահի իր իշխանությունը, Տաթևացին կարևորում է իշխանին օգնող իմաստուն խորհրդականների դերը երկրի կառավարման գործում: Իշխանը, իբրև մարդ, բնությամբ տկար և մահկանացու է, այսինքն՝ չի կարող ամեն ինչ իմանալ և ամեն ինչ կարողանալ, ուստի իշխանը պարտավոր է իմաստունների օգնությամբ կառավարել երկիրը: Տաթևացին նշում է, որ «մին մարդն կարէ զմիոյ տուն շինութիւն խորհիլ, այլ մի մարդ՝ զբազմաց ոչ կարէ, վասն այն պարտ է բազմաց ի մի վայր ժողովիլ. և զբազում երկրին զօգուտն գտանել»¹⁶: Այս կապակցությամբ Տաթևացին բերում է հոռմեական կայսրերի և «տիեզերակալների» օրինակը. նրանք ամեն օր խորհրդակցում էին իմաստուն մարդկանց հետ և «նոցա համաձայնութեամբն զիշխանութիւն վարէին, վասն որոյ մնաց թագաւորութիւն հաստատ. և տիրեն մինչև ցայսօր»: Իսկ հակառակ հոռմեացիների, շարունակում է Տաթևացին, հայոց առաջնորդները և իշխանները «ինքնիշխանութեամբ կատարեն զգործն առանց խորհրդակցի», որի հետևանքն այն է, որ «բարձեալ է իշխանութիւնն և աւերեալ երկիրն. և տաւազրեալ են ժողովուրդք մեր ի վերայ երկրի. և ցրեալ յամենայն ազգս»¹⁷: Ահա թե ինչու, սեփական ազգի դառը փորձից ենելով, Տաթևացին կարևորում է «հասարակաբար», իմա՝ կոլեկտիվ կառավարման նշանակությունը:

Տաթևացու կարծիքով երկրի կառավարման գործում խորհրդատուների անհրաժեշտությունը բխում է նաև միմյանց օգտակար լինելու աստվածային օրենքից: Տաթևացին առաջ է քաշում կառավարման գործին բոլորի մասնակցություն խնդիրը՝ կարծելով, որ յուրաքանչյուրի լուծման այս գործում արժեքավոր է. «Սու որպէս զլուխն մարմնոյն է պիտանի, նոյնպէս և մարմինն զլիտոյն: Այսպէս և առաջնորդն և հետեւալքն՝ միմեանց պիտանիք են. ի շինութիւն երկրի, ի խորհուրդ, ի պատերազմ, ի խաղաղութիւն և յայլսն: Եւ առաւել քան զամենայն պիտանաւորութիւն՝ ունին առ միմեանս զժողովիլն ի խորհուրդ. և ապա համաձայն նոցին խորհրդով՝ վարել զշինութիւն աշխարհի»¹⁸: Կառավարման գործում ժողովրդի մասնակցության սկզբունքը բոլորին պատասխանատու է դարձնում երկրի բախտի համար և նվազագույնի հասցնում սխալվելու հավանականությունը: Ինչպես մարմնի անդամները միմյանց օգնում և լրացնում են, այնպես էլ տարբեր խավերի պատկանող մարդիկ պարտավոր են «ի խորհուրդն կցորդիլ միմեանց. և զուղիղն գտանել. և որպէս կարօտ են միմեանց ճորտ և պարոն. հարուստ և աղքատ, վարդապետ և աշակերտ, նոյնպէս միտքն կարօտ է առաջնորդի և խորհրդակցի: Եվ իմաստուն մարդն՝ հանապազ խնդրէ իւր խորհրդակից և օգնական մտացն իւրաց»¹⁹: Եթե խաղաղ ժամանակ երկրի կառավարման գործում խորհրդատուների օգնությունը պետքական է, ապա «ի ժամ պատերազմի առաւել պիտանի է»:

Ինչպես տիեզերքը չի կարող գոյատևել առանց կարգի, այնպես էլ մարդկային հասարակությունը՝ առանց օրենքների և ավանդույթների: Միջնադարյան շատ մտածողների նման Տաթևացին կարծում է, որ իշխանությունը պետք է խարսխված լինի օրենքների վրա և օրենքներով պետք է կարգավորվեն մարդկանց միջև հարաբերությունները՝ «մարմնաւոր իշխանքն՝ քաղաքական օրինօք կարգաւորեն զհնազանդեալս. և հոգևորքն հոգևոր օրինօք»²⁰: Տաթևացին

¹⁶ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, էջ 423:

¹⁷ Նույն տեղում, էջ 423—424:

¹⁸ Նույն տեղում, էջ 423:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Զմերան հատոր, էջ 348:

տարբերակում է երեք կարգի օրենք՝ աստվածային, բնական և մարդկային: Աստվածային օրենքները, որոնք տրված են Ս. Գրոց մեջ, անփոփոխ, հավերժական և կատարյալ օրենքներ են, որոնց մարդիկ պետք է անվերապահորեն ենթարկվեն և իրագործեն: Դրանք վերաբերում են մարդկային կեցության վերջնական նպատակներին և անփոփոխ ուղեցույցի դեր են խաղում մարդկանց համար: Մարդիկ պարտավոր են հնազանդվել աստվածային օրենքներին, որովհետև «օրէնքն Աստուծոյ ուղղութիւն է մեզ ի ճանապարհ կենցաղոյս. և յորժամ թողումք՝ թիրիմք և մոլորիմք: Այլև օրէնքն օգնական է մեզ որպէս սին տան. յորժամ թողումք զօրէնս խախտի հոգևոր շինուածս մեր»²¹, Տաթևացին շեշտում է այն միտքը, որ աստվածային օրենքների առջև բոլոր մարդիկ հավասար են, քանի որ «յօրէնս մեծ և փոքր չկայ»: Եթե մարդիկ խախտում են աստվածային օրենքները, ապա Աստված անմիջապես պատժում է նրանց:

Բնական օրենքը աստվածային օրենքի մասնավոր դրսևորումն է: Մարդը «ունի զբնական օրէնս, որ ամեն մարդ զբարին սիրէ բնութեամբ, և է՛ ինքն անձնիշխան. և այս բնական օրինօքս պարտ է որ գործէ մարդ զբարին»²²: Բնական օրենքի համաձայն մարդը պետք է գործի Աստծո կողմից իր բնության մեջ ներդրած բնական հակումներին համապատասխան: Խոսքը վերաբերում է ոչ միայն և ոչ այնքան կենսաբանական-ֆիզիոլոգիական հակումներին, որքան մարդու բանական և անձնիշխան լինելու հանգամանքին: Օրինակ, բնական օրենքի համաձայն մարդու մարմինը պետք է հնազանդվի հոգուն, իսկ վերջինս էլ պետք է հիմք ընդունի բանականության և կամքի որոշումները:

Քանի որ մարդիկ ոչ միշտ են հետևում իրենց բնության օրենքին, ինչը անկարգություն և խռովություն է ստեղծում սոցիալական աշխարհում, ուստի անհրաժեշտություն է դառնում քաղաքական (մարդկային) օրենքների մշակումը: Մարդկային օրենքները պետք է համապատասխանեն բնական օրենքներին, իսկ ավելի ստույգ՝ բնական օրենքները պետք է վերածվեն համընդհանուր և պարտադիր օրենքների: Այդ օրենքները պետք է կարգավորեն մարդկանց վարքը և գործունեությունը, իրարից սահմանազատեն թույլատրելի և արգելված արարքները, պատժեն օրինախախտներին և այլն: Մարդկային օրենքների նպատակը համընդհանուր բարիքն է. դրանք կոչված են ապահովելու բոլոր մարդկանց բարեկեցությունը: Տաթևացին այն միտքն է արտահայտում, որ մարդկային օրենքները չպետք է վերացական բնույթ ունենան, այսինքն՝ դրանք պետք է համապատասխանեն տվյալ ժամանակում ըստեղծված մարդկային հարաբերություններին և լինեն իրագործելի: Ոչ թե ժամանակը պետք է հետևի օրենքին, գրում է Տաթևացին, այլ օրենքը պետք է հետևի ժամանակին՝ «արէնք հետևի ժամանակին. և ժամանակն տիրէ օրինացն. զի կարէ ժամանակ փոփոխել զարէնսն, խոտել և ընտրել...»²³: Եննելով այն մտքից, որ «օրէնքն վասն մարդոյս է», և ոչ թե մարդը օրենքի համար, Տաթևացին բխցնում է մարդկային օրենքների հարաբերական և պայմանական բնույթի վերաբերյալ գաղափարը: Եթե օրենքները հարաբերական և ժամանակավոր բնույթ ունեն, նշանակում է մարդիկ չպետք է դրանց վերաբերվեն «անբանաբար», այլ՝ իմաստութեամբ և ընտրողաբար:

Տաթևացու համոզմամբ օրենքներով կառավարումը երկրի հզորության և բարգավաճման գրավականն է: Եվ, ընդհակառակը, աստվածային և մարդ-

²¹ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, էջ 11:

²² Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Չմերան հատոր, էջ 186:

²³ Կրիգոր Տաթևացի, Համառատ հաւաքումն յառակաջ գրոցն Սողոմոնի, Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. թիվ 1264, էջ 373ա:

կային օրենքների անտեսումը, անիրավությանը և անարդարությանը երկրի կառավարումը պատճառ է դառնում սոցիալական ցնցումների (խռովություն, ապստամբություն) և ազգային պետականության կործանման համար: Երզրն-կացու պես Տաթևացին հայոց իշխանության (թագավորության) անկումը բացատրում է այն բանով, որ հայ առաջնորդները իրենց կառավարման ընթացքում չեն հետևել աստվածային և մարդկային օրենքներին, այսինքն՝ չեն մրտածել ընդհանուր բարիքի մասին, որի պատճառով Աստված զրկել է նրանց իշխանությունից: «Զի սուրբութիւն է Աստուծոյ,— գրում է Տաթևացին,— յորժամ տայ իշխանք ի վերայ ազգաց, եթէ զարդարութենէ բուռն հարկանեն. և իրաւամբք վարեն զաշխարհս, բարձրանայ իշխանութիւնն. և օրրստօրէ առաւելանի. և երկիրն ի շինութիւն և ի խաղաղութիւն աճի: Իսկ թէ զանիրաւութենէ բուռն հարկանեն, նուազի իշխանութիւն նոցա. և երկիրն խռովի և աւերի: Եւ զբանիս ճշմարտութիւնն տեսցես յիսմայելացոց ազգս և ի սեռս մեր: Որ աճեաց և մեծացաւ իշխանութիւն նոցա. և մերս նուազեցաւ և կորեալ»²⁴:

Ինչպես իրավացիորեն նկատել է Ս. Արևշատյանը, Տաթևացու սոցիալ-քաղաքական հայացքների հիմնական հասկացությունը «համընդհանուր բարօրությունն» է, որը պետք է լինի պետական իշխանության գլխավոր նպատակը²⁵: Այս իմաստով Տաթևացին համընդհանուր բարիքը գերադասում է մասնավոր բարիքից: Հենվելով Արիստոտելի համապատասխան դրույթի վրա՝ նա նշում է, թե «որքան բարին հասարակ է՝ բարեգոյն է. որպէս մին տան բարին առաւել բարի է քան մին մարդոյն. և մին քաղաքին, քան մին տան. և մին թագաւորութեան բարին՝ մեծ է քան մին քաղաքին»²⁶: Եթե իշխանը մտածում է ընդհանուրի բարիքի մասին, ապա, Աստուծոց ստանալով իշխանություն, պարտավոր է մտահոգվել իր իշխանության տակ գտնվող բոլոր մարդկանց մասին և հանճարեղ կառավարմամբ ապահովել ազգային ու սոցիալական համերաշխությունը: Նա հանդես է գալիս իբրև այդ համերաշխության երաշխավոր, ուստի պետք է կատարի իր պարտավորությունը: «Եւ սովորութիւն է աշխարհի՝ որ երաշխաւորն պարտական է վճարել զպարտսն. կամ ի հնազանդութիւն պահել զերաշխաւորեալն. նոյնպէս քահանայն և առաջնորդն որ երաշխաւոր է ժողովրդեանն՝ կամ պարտ է որ զժողովուրդն ի հնազանդութիւն Աստուծոյ պահէ՝ և կամ ինքն փոխանակ նոցա զպարտսն վճարէ...»²⁷: Եթե իշխանը շարաշահում է իր իշխանությունը, երկիրը կառավարում անարդար և անիրավ կերպով, ապա անխուսափելիորեն փլուզվում է հասարակական ներդաշնակությունը, մարդկանց միջև հաստատվում թշնամական հարաբերություններ:

«Ընդհանուր բարօրության» և սոցիալական համերաշխության ապահովման մյուս գործոնը սոցիալական հնազանդությունն է: Տաթևացին շեշտում է այն միտքը, որ երկրի բնակիչները պետք է ենթարկվեն իրենց աշխարհիկ տերերին, քանի որ դա համապատասխանում է աստվածային օրենքին՝ «պարտիմք հնազանդ լինիլ իբրև փոխանորդութիւն Աստուծոյ. և զհրամայեալն նոցա լսել և կատարել»: Աշխարհիկ տերերին հնազանդվելը հպատակների սոցիալական պարտականությունն է: Դա արդյո՞ք նշանակում է, որ բնակիչները պետք է անվերապահ հնազանդվեն իշխանի բոլոր հրամաններին. չէ

²⁴ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, էջ 424:

²⁵ Տե՛ս Ս. Արևշատյան, Գրիգոր Տաթևացի, «Հայ մշակույթի նշանավոր գործիչները (5—18-րդ դարեր)», Երևան, 1976, էջ 414: Տե՛ս նաև Եսայի Փիլոսոֆսկե Եզլադյա Գրիգորա Կաթաւազ, Երեւան, 1957:

²⁶ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Զմերան հատոր, էջ 290:

²⁷ Նույն տեղում, էջ 185:

որ կան շար, անբարո իշխաններ, կամ՝ իշխաններ, ովքեր կարող են անիրավ հրամաններ արձակել: Տաթևացու կարծիքով, պետք է առհասարակ հնազանդվել թե բարի և թե շար իշխաններին՝ «բարի իշխանին վասն բարութեան իւրոյ. և շար իշխանին վասն հրամանացն Աստուծոյ»: Անհնազանդությունը աստվածային օրենքի խախտում է: Բայց անվերապահ հնազանդության հետ մեկտեղ Տաթևացին անում է երկու վերապահում. հպատակները իրավունք ունեն շնթարկվելու իշխանին, եթե նա շեղվում է հավատից և եթե արձակում է շար հրամաններ: «Երկու իր մի լսեր իշխանին, — գրում է Տաթևացին, — մին զհաւատոյն. և մին զշար գործոյն: Զի հաւատն և բարի գործն՝ բաժին Աստուծոյ է. և ոչ իշխանին»²⁸: Զորօրինակ, իշխանը հրամայում է մարդ սպանել. հնազանդվել նրան, թե՞ ոչ: Եթե ամբաստանյալը գող է, ավազակ կամ «թշնամի թագաւորութեան», նշում է Տաթևացին, ապա նրան սպանելը կլինի արդարացի, իսկ սպանողը՝ անմեղ: Իսկ եթե ամբաստանյալը անմեղ է, ապա «իշխանն որ հրամայէ՝ և դու որ սպանանես՝ արեան նորա պարտական էք ի միասին», որովհետև դա «ըստ օրինացն Աստուծոյ» չէ, այլ «ըստ շար կամաց իւրեանց գործեցին»²⁹: Հավատի հարցում անհնազանդության արդարացումը մեկ անգամ ևս վկայում է առ այն, որ «անօրենների» տիրապետության տակ գտնվող հայ ժողովրդին Տաթևացին իրավունք է վերապահում պաշտպանելու իր հոգևոր անկախությունը՝ ազգային ինքնությունը:

Միջնադարյան շատ մտածողների նման Տաթևացին ուշադրություն է դարձնում իշխանի, առաջնորդի ու կառավարողի մարդկային արժանիքների և բարոյական նկարագրի հարցին: Քանի որ իշխանը, իբրև առաջնորդ, գլխավորում է պետությունը և հիմնականում նրա գործունեությունից է կախված ժողովրդի սոցիալ-բարոյական որպիսությունը, ուստի, ինչպիսին իշխանն է, այնպիսին էլ նրա հպատակներն են: Տաթևացին ընդգծում է այն միտքը, որ բարոյահոգեբանական անմիջական կախվածություն գոյություն ունի հպատակների և առաջնորդների միջև. «յորժամ՝ կարգաւորն և իշխանն սխալին, ամենայն ժողովուրդքն և իշխեցեալքն ընդ նոսին սխալին և անկարգանան: Զի երկիրը և խրատ՝ նոքա են. յորժամ ի նոցանէ ոչ խրատին. զամեն շարիս առանց ամօթոյ գործեն: Նմանապէս և գլուխն յորժամ ցաւի, ամեն մարմինքն ընդ նմա ցաւին. նոյնպէս և առաջնորդն թէ ցաւոտ և հիւանդ է մեղօք, ամեն հետեալքն նոյնպէս ցաւոտ լինին»³⁰: Կամ՝ «թէ հոգևոր առաջնորդն և մարմնաւոր իշխանն անիրաւ լինին և վատ, ամեն հնազանդեալքն նոյնպէս անիրավ են»³¹: Առաջնորդ-ժողովուրդ փոխհարաբերության մեջ Տաթևացին անշափ կարևորում է առաջնորդի բարոյակրթական դերը ժողովրդի կյանքում: Նրա պատկերավոր արտահայտությամբ՝ «առաջնորդն համեմիչ է անհամ ժողովրդեանն. թէ անհամանայ շար վարուք՝ ոչ ինչ է պիտանացու, բայց միայն կոխան լինիլ ի մարդկանէ: Ապա պարտ է առաջնորդին պահել զինքն անարատ վարուք. զի մի՛ լիցի աղ անհամ, կամ առիւծ մեռեալ, կամ ճրագ շիջեալ»³²:

Քանի որ ժողովրդի բարոյահոգեբանական տրամադրությունը մեծաչափ կախված է կառավարողի բարոյական նկարագրից, ուստի Տաթևացին այն միտքն է արտահայտում, որ առաջնորդը բոլոր առումներով պետք է ունենա օրինակելի վարք ու արժանապատիվ կեցվածք և միշտ լինի առաջնորդին պատշաճող բարձրության վրա, մանավանդ, որ նա գտնվում է ժողովրդի ու-

²⁸ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, էջ 54:

²⁹ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Ձմերան հատոր, էջ 194:

³⁰ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, էջ 423:

³¹ Նույն տեղում:

³² Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Ձմերան հատոր, էջ 290:

շաղրութեան կենտրոնում. «ժողովրդեանն ամեն աշք և միտք՝ յառաջնորդն լինին. ոմն նայի ուսումն. և ոմն ի վարսն. և այլք ի հաւատն. ոմանք հային զի ուսանին, ոմանք հային զի պարսաւեն...: Եւ այնպէս զգաստ պարտ է լինիլ առաջնորդին. զի ամենքն հաճեցին ի նա. իւրքն և օտարքն. հաւատացեալքն և անհաւատքն...»³³: Որպեսզի առաջնորդը կարողանա արդարացնել ժողովրդի տարբեր խավերի սպասելիքները, նա պետք է օժտված լինի մի շարք հատկութիւններով: Օրինակ, առաջնորդը պետք է լինի կրթված, դաստիարակված, բարեպաշտ և ուսյալ անձնավորութիւն: Տաթևացին կարծում է, որ առաջնորդները ավելի շատ կարիք ունեն հոգևոր կրթութեան և դաստիարակութեան, քան մյուս մարդիկ. «զի հոգ աշխարհիս. և պատրանք մեծութեան առաւել տիրէ ի վերայ նորա, վասն որոյ պարտ է նորա առաւել քարոզել»³⁴: Կրթութիւնը և իմաստութիւնը կառավարողի բարոյական նկարագրի անհրաժեշտ բաղադրիչներն են: Միայն իմաստուն իշխանը գիտի, թե ինչպես պետք է երկիրը շեն ու խաղաղ պահել, միայն նա կարող է «զդատաստանն արդարութեամբ և ուղղութեամբ» վարել: Իմաստուն իշխանը նաև մարդագետ և մարդասեր է. նա ոմանց քաղցր խոսք է ասում, ոմանց հուսադրում, օգնում աղքատներին և «այնպէս հանճարով զիշխանութիւն կառուարէ»: Տաթևացին նշում է նաև, որ իշխանը պետք է օժտված լինի զորավարական հմտութեամբ. կարողանա պատերազմի ժամանակ ճիշտ օգտագործել ռազմական ուժը, անհրաժեշտ պահին քաջալերիչ խոսքերով բարձրացնել ռազմիկների մարտական ոգին: Ճակատամարտից առաջ նա պետք է «բանիւ քաջալերեսցէ ըզզօրսն արի կալ. և մի՛ թուանալ. և մի՛ երկնչիլ. և զառաջին քաջ նահատակսն յիշեսցէ թէ՛՝ այնպէս քաջացան, յաղթեցին և անուն բարի ժառանգեցին»³⁵:

Իշխանութեան և կառավարման մասին Տաթևացու ուսմունքը միջնադարյան քրիստոնեական մտքին բնորոշ հումանիստական ուղղվածութիւն ունի: Սոցիալ-քաղաքագիտական հարցերի դիտարկման ժամանակ Տաթևացին ելնում է քրիստոնեական բարոյականութեան սկզբունքներից, ձգտում բարոյական, մարդկային շփանիշներով իմաստավորել հասարակական-քաղաքական երևույթները:

С. А. ЗАКАРЯН—Учение Григора Татеваци о власти и управлении.—В статье анализируются взгляды выдающегося армянского философа XIV—XV вв. о происхождении социальной жизни, о структуре общества и государства, социальной иерархии, взаимоотношениях духовной и мирской власти, правителя и народа, о формах управления и законах. Актуальные и сегодня эти вопросы Татеваци разрабатывает, опираясь на главные принципы христианского миропонимания и антропологии. Характерной чертой гуманизма Татеваци является то, что сущность управления и власти осмысливается им в моральном и национальном аспектах.

³³ Նույն տեղում, էջ 183:

³⁴ Գրիգոր Տաթևացի, Գիրք որ կոչի Սաղմոսի քաղուածք, Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. թիվ 1019, 38բ:

³⁵ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, էջ 425: